ԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ զինվորական կոմիսարիատի ավագ
սպա-իրավաբան, մայոր,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը մարտունակությամբ հակառակորդի զինված ուժերի նկատմամբ ՀՀ զինված ուժերի գերազանցության ապահովումն է, զինված ուժերում այնպիսի չափանիշների ստեղծումը և ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության առանձնահատկություններին՝ ամբողջությամբ լուծելով ռազմական անվտանգության խնդիրները: Բարեփոխումների արդյունքում միաժամանակ կապահովվեն նաև փոխգործակցելիության անհրաժեշտ հնարավորություններ՝ Հայաստանի միջազգային վարկի և հեղինակության բարձացմանը համարժեք միջազգային անվտանգության երաշխավորման չափաբաժին ստանձնելու համար:

Հիմնաբառեր *- զինված ուժեր, պաշտպանական բարեփոխումներ, անվտանգություն, երկրի պաշտպանություն, ռազմական սպառնալիք, ռազմավարություն, ռազմական դոկտրինա, կառավարման համակարգ, օրենսդրություն, քաղաքացիական վերահսկողություն:*

Յուրաքանչյուր երկրի պաշտպանական քաղաքականությունը տվյալ պետության ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը նպատակաուղղված է հավանական արտաքին թշնամուց պետության, բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանությանը: Պաշտպանական քաղաքականությունը չպետք է նույնացնել երկրի ռազմական քաղաքականության հետ, այլ պետք է ռազմական քաղաքականությունը դիտարկել որպես պաշտպանական քաղաքականության առանցքային բաղադրիչ, որը հետադարձ գործառութային կապով առնչվում է մյուս բոլոր բաղադրիչների հետ: Ռազմական քաղաքականության հայեցակարգային մասը ապահովում է պաշտպանության բնագավառի կառավարական մարմինը, իսկ գործնական մասը՝ զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմինը (գլխավոր շտաբը), որը հետադարձ գործառութային կապերի շրջանակներում և իր իրավասության սահմաններում մասնակցում է նաև ռազմական քաղաքականության հայեցակարգային բաժինների փորձաքննության ապահովմանը[1]:

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը և ընդհանրապես պաշտպանական համակարգը քարացած կառույց չէ. այն պետության և հասարակության մի օղակն է: Պետությաուն ու հասարակության անընդհատ զարգացմանը զուգընթաց աճում է նաև Հայաստանի միջազգային վարկանիշն ու հեղինակությունը: Ուստի, Հայաստանի և հայ հասարակության ռազմական անվտանգությունն ապահովելու համար զինված ուժերը պետք է համաքայլ ընթանան վերոնշյալ բոլոր զարգացումներին:

Փոփոխվում են նաև Հայաստանի շուրջ ձևավորվող արտաքին իրողությունները: Այսօր Հայաստանի Հանրապետությունը, իր կայացմանը զուգընթաց, ավելի է ներգրավվում միջազգային ռազմաքաղաքական գործընթացներում, անդամակցում տարածաշրջանային և միջազգային զանազան կազմակերպություններին, ստանձնում մի շարք միջազգային պարտավորություններ:

Սակայն միակողմանիորեն զարգացող, թեկուզև մարտունակ զինված ուժերով հնարավոր չէ միջազգային անվտանգության լծակների միաժամանակյա գործնական կիրառումը: Այս առումով խնդիրը բարդ է. անհրաժեշտ է ստեղծել այն որակները՝ ինստիտուտները և չափանիշները, որոնց միջոցով կարելի կլինի զարգացնել երկրի զինված ուժերի բազմակողմանի հնարավորությունները և կիրառելի դարձնել այդ լծակները: Դա է զինված ուժերի զարգացման և արդիականացման ուղին, հետևաբար, այդ նպատակներին ուղղված պաշտպանական բարեփոխումների իրականացումն անխուսափելի է:

Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման գործում զինված ուժերի առանձնաց-

www.journal.lawinstitute.am

ված դերը պայմանավորված է նաև առկա ռազմական սպառնալիքի ծավալով, բանակի համախմբող դերով ու համազգային բնույթով: Զինված ուժերը մշտապես պետք է զբաղվեն միայն իրենց խնդիրների կատարմամբ և երբեք ու ոչ մի պայմանով չներքաշվեն քաղաքականության մեջ: Ամուր, կարգապահ ու մարտունակ բանակը, հեռու մնալով քաղաքականությունից, միաժամանակ միշտ էլ գտնվելու է երկրի «քաղաքականության կենտրոնում»՝ իր գոյությամբ վստահություն, հպարտություն ու հավատ ներշնչելով ժողովրդին, զգաստացնելով աշխարհաքաղաքական վիճակը և չեզոքացնելով ռազմական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները: Եվ, իհարկե, միայն արդյունավետորեն օգտագործելով ողջ հայության ու Հայաստանում բնակվող ազգաբնակչության հսկայական ներուժն ու հնարավորությունները, հնարավոր է ապահովել վերոնշյալ պահանջներն արտահայտող արդիական և հուսալի զինված ուժեր[2]:

Ռազմական անվտանգության ապահովումը «թանկ հաճույք է» նույնիսկ ամենակայացած պետությունների համար: Այս առումով պաշտպանական բարեփոխումները նպատակ ունեն հնարավորություններ ստեղծել սահմանափակ ռեսուրսներն առավելագույս արդյունավետ օգտագործելու համար: Ու թեև ՀՀ զինված ուժերը մյուս հարևանների համեմատ կայացած և մարտունակ կարելի է համարել՝ գործնականորեն ապացուցելով դեռևս Ղարաբաղյան պատերազմի տարիներին, սակայն բանակի ներկայիս հնարավորությունները կատարյալ չեն և շտկումների ու բարեփոխումների կարիք ունեն: Պաշտպանական բարեփոխումների խնդիրը զինված ուժերի կայուն և հեռանկարային զարգացման ապահովումն է, բոլոր ոլորտներում ԶՈՒ կարողությունների բարձրացումը, նոր կարողությունների ստեղծումը:

Նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ գրեթե միաժամանակ, սակայն առավել անբարենպաստ պայմաններում ձեռնամուխ լինելով ազգային բանակի ստեղծմանը՝ Հայաստանը կարողացավ աներևակայելի կարճ ժամանակահատվածում ստեղծել կարգապահ ու մարտունակ զինված ուժեր, որոնք ներկայումս իրենց մարտական պատրաստության մակարդակով, բարոյահոգեբանական վիճակով առաջիններից են ԱՊՀ-ում, իսկ Հարավկովկասյան տարածաշրջանում համարվում են ամենամարտունակն ու առաջավորը[3]:

Ըստ էության, պաշտպանական բարեփոխումները պետք է ուղղված լինեն հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը.

1. Զինված ուժերի արդիականացում և մարտունակության ամրապնդում՝ ժամանակակից չափանիշների ներդրմամբ,

2. ՀՀ ռազմական անվտանգության ապահովում՝ իրական և հնարավոր ռազմական սպառնալիքների չեզոքացմամբ,

3. ՀՀ զինված ուժերի կողմից միջազգային անվտանգության ապահովման մասնաբաժնի ստանձնում՝ միջազգային անվտանգության տարբեր կառույցների հետ փոխգործակցելիության հնարավորությունների ընդլայնմամբ,

4. ԶՈՒ կայուն և համակողմանի զարգացման ապահովում՝ ճկուն, թափանցիկ և արդյունավետ համակարգերի ներդրմամբ:

Այսօր հայկական բանակի հարաճուն զարգացման հիմքում համազգային մոտեցման շնորհիվ երկրի պաշտպանական ոլորտում հաջողությամբ իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, որոնց շնորհիվ օրեցօր ավելանում են ԶՈՒ մարտական կարողությունները, ավելի է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Արդյունքում ՀՀ զինված ուժերը հանդես են գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը[4]:

Ընդհանուր առմամբ, պաշտպանական բարեփոխումների գործընթացը կարելի է բաժանել 3 փուլերի.

1. հայեցակարգային մոտեցումների որդեգրում, ռազմական դոկտրինի մշակում և հայեցակարգային հիմքերի բարեփոխումների իրականացում՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների, ռազմական անվտանգության ապահովման համակարգի, դրա կառուցվածքի, խնդիրների, գործունեության և զարգացման ուղղությունների ու նպատակների հստակեցման նպատակով – 2007-2008թթ.,

2. պաշտպանության ռազմավարական վերանայում՝ ԶՈՒ առկա հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների որոշում ու պլանավորում – 2008-2010թթ.,

3. գործնական բարեփոխումների և առանձին ենթակառուցվածքների իրականացում՝ ԶՈՒ համար հասանելի ազգային և միջազգային հնարավորությունների կիրառմամբ -2010-2015թթ.[5]:

ՓՈՒԼ 1 - Պաշտպանական հայեցակարգային հիմքերի բարեփոխումներ

Ազգային անվտանգության ռազմավարության

ընդունումը[6] հայեցակարգային առումով նախանշեց ՀՀ պաշտպանական դոկտրինի քաղաքական և ռազմաքաղաքական ուղղվածությունը: Հետևաբար, պաշտպանական ոլորտի դոկտրինը կազմվել է Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթի հիման վրա, համահունչ է Ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին և լիարժեքորեն սահմանում է զինված ուժերի՝ ազգային անվտանգությանն առնչվող պարտականությունները[7]:

Ռազմական դոկտրինը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կողմից օգտագործվել է նաև ԶՈՒ տարբեր օղակների, ինչպես նաև ռազմական ստորաբաժանումների քանակի և տեսակի, մարտական խնդիրների սահմանման համար: Փաստաթուղթը ընդհանուր առմամբ սահմանել է նաև պաշտպանական համակարգի կազմակերպչական քաղաքականությունը՝ ներառելով ՊՆ և ԳՇ տարբեր ստորաբաժանումների գործառույթներն ու պարտականությունները:

Բացի այդ, Ռազմական դոկտրինը նկարագրում է ՀՀ ԶՈՒ դերն ու առաքելությունը և ծառայում է որպես սկզբունքային փաստաթուղթ բարեփոխումների ուղղորդման համար: Եթե ՀՀ զինված ուժերի համար դոկտրինը, լինելով մեկ միասնական ռազմավարական փաստաթուղթ, պետք է ուղեցույց հանդիսանա Պաշտպանության նախարարության, ԶՈՒ գլխավոր շտաբի և ընդհանրապես պաշտպանական համակարգի համար պատասխանատու այլ պետական գերատեսչությունների համար, ապա ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պետական և հասարակական այլ օղակների համար այն դառնում է ազգային անվտանգության, պաշտպանական քաղաքականության և դրա ֆինանսավորման նպատակով հասարակական աջակցության ապահովման կարևոր գործոն:

Քանի որ Ռազմական դոկտրինը, հանդիսանալով ԶՈՒ հիմնական հայեցակարգային հիմքը, բաց փաստաթուղթ է, ինչը թույլ է տալիս այն տարածել հասարակության շրջանում, անհրաժեշտ է, որ այն ընդհանուր առմամբ հայտարարի նաև Ազգային անվտանգության ռազմավարությունում սահմանված ռազմական բաղադրատարրերի իրականացմանն ուղղված ռազմավարությունը:

Ժողովրդավարական արժեքային համակարգում որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ միջոց գրականության մեջ նշվում է նաև «հասարակական կամ արտապետական վերահսկողության» մասին: Ընդ որում, «արտապետական վերահսկողություն» տերմինը պայմանական է և նկատի ունի այնպիսի հաստատությունների վերահսկողական գործունեությունը, որոնք պետական իշխանության մաս չեն կազմում, սակայն ակտիվ կերպով մասնակցում են պետական քաղաքականության իրականացմանը[8]: Պաշտպանական ոլորտի դոկտրինը նաև անհրաժեշտ է բանակ-հասարակություն կապն ամրապնդելու, հասարակության մեջ զինված ուժերի նկատմամբ վստահությունն ամրապնդելու համար, ուստի այն պետք է պաշտպանական բոլոր ոլորտներում ԶՈՒ հասարակական վերահսկողության մեխանիզմներ նախատեսի:

Այդպիսով, ՀՀ ռազմական դոկտրինը հանդիսացավ պաշտպանության բնագավառի և զինված ուժերի համար օրենսդրական, հայեցակարգային և բարեփոխումների համար մեկնարկային հիմնական փաստաթուղթը:

ՓՈՒԼ 2 - Պաշտպանության ռազմավարական վերանայում

Ռազմական դոկտրինի մշակումից և ընդունումից հետո ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնամուխ եղավ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացին: Այն անհրաժեշտ էր ՀՀ զինված ուժերի պաշտպանական բարեփոխումները ճիշտ ուղղորդելու, արդիականացման և զարգացման հեռանկարը պլանավորելու համար: Այսինքն, պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը ՀՀ զարգացման առաջնահերթությունների և պաշտպանական բարեփոխումների համատեքստում պետք է որոշի ռազմական միջոցներով ՀՀ պաշտպանության իրականացման համար զինված ուժերի առկա կարողություններն ու պահանջվող անհրաժեշտությունները՝ ըստ այդմ հստակեցնելով բարեփոխումների նպատակները[9]:

ՀՀ զինված ուժերի առկա կարողությունները գնահատելուց ու վերանայելուց բացի ռազմավարական վերանայումը պետք է օգտագործվի նաև ներկա և տեսանելի հեռանկարում ռազմաքաղաքական միջավայրի գնահատման նպատակով՝ այդ կերպ վերաարժեքավորելով առկա սպառնալիքները և հաստատելով ռազմական ռազմավարության առաջնայնությունները, ինչը պաշտպանական բարեփոխումների իրականացման գործում հնարավորություններ կստեղծի թույլատրելի ռիսկերի որոշման համար:

Վերանայման գործընթացը կարևոր է նաև սպառնալիքներին դիմակայելու համար ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներից պահանջվող պատրաստականության վիճակի սահմանման տեսանկյունից: Վերանայման արդյունքները հիմք են հանդի-

www.journal.lawinstitute.am

սանում ռազմական կարիքները որոշելու և ՀՀ զինված ուժերի օպտիմալ կառուցվածքը երկարաժամկետ հեռանկարով պլանավորելու համար:

Այս ամենը կիրառվում է զինված ուժերի թվաքանակի, սպառազինության, ստորաբաժանումների, զորատեսակների և ընդհանրապես, Հայաստանի պաշտպանունակության վրա այս կամ այն կերպ ազդող զինված ուժերի կառուցվածքի հետագա փոփոխություններ իրականացնելու համար: Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքում անհրաժեշտություն առաջացավ վերանայել և մեկ անգամ ևս հիմնավորել ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների տեղակայման աշխարհագրությունը՝ հիմքում ունենալով ենթակառույցների օպտիմալացումը, որը հանգեցնում է միմյանց կրկնող օղակների, ծախսերի և ռեսուրսների կրճատման:

Պաշտպանության ռազմավարական վերանայմանը զուգընթաց իրականացվեց նաև ՀՀ ԶՈՒ հրամանատարական ուղղահայացի վերանայումը, որի էությունը կայանում է ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի լիազորությունների և գործառույթների հստակ տարանջատումը: Սա անհրաժեշտ քայլ է ԶՈՒ հետագա զարգացումն ապահովելու համար, քանի որ բացի ներկայիս գործող համակարգի թերություններից, հաճախ միմյանց կրկնող ստորաբաժանումների առկայությունից, ԶՈՒ հրամանատարական ուղղահայացի վերանայումը նպաստում է նաև այս օղակի գործունեության արդյունավետության բարձրացմանը, հիմք է հանդիսանում պաշտպանական համակարգում պաշտպանական պլանավորման մարմինների կատարելագործման, ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկման մեխանիզմների ամրապնդման համար: Փաստորեն, ռազմական դոկտրինի մշակումը և պաշտպանության ռազմավարական վերանայումը ստեղծում են բոլոր նախադրյալները երկրի պաշտպանության առանձին ենթաոլորտների արդիականացմանն ուղղված արդյունավետ բարեփոխումներ իրականացնելու համար:

ՓՈՒԼ 3 - Բարեփոխումներն առանձին ոլորտներում, օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը

ՀՀ ռազմական դոկտրինի մշակումը և պաշտպանության ռազմավարական վերանայումը ստեղծեցին բոլոր նախադրյալները պաշտպանական առանձին ոլորտների արդիականացման բարեփոխումներ իրականացնելու համար: Առաջնահերթ բարեփոխումների անհրաժեշտություն էր պահանջվում կադրերի պատրաստման և անձնակազմի կառավարման, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման, զորահավաքային և պահեստազորային համակարգի, թիկունքի և այլ բնագավառները: Ոչ պակաս կարևոր են զինված ուժերի ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների զարգացումը:

Ընդ որում, պաշտպանական բարեփոխումների նպատակներն ու տրամաբանությունը նաև պաշտպանության ոլորտի օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն են ստեղծում: Այս ոլորտում գործող օրենքները զինված ուժերի կարողությունների զարգացման շրջաններում արդեն լիարժեքորեն չէին արտացոլում բարեփոխումների ուղղությամբ որդեգրած նպատակներն ու հնարավորություններ ընձեռում դրանք կյանքի կոչելու համար:

Պաշտպանական բարեփոխումների օրենսդրական ուղղվածության շրջանակներում համապատասխան կարգավորումներ և զարգացումներ անցկացվեցին հետևյալ հիմնական հարցերի վերաբերյալ.

- հրամանատարական ուղղահայացի վերանայումն ու ՀՀ զինված ուժերի ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների զարգացումը,
- ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հաստիքների ներդրումը և քաղաքացիական անձնակազմի սոցիալական ապահովումը,
- զորահավաքային և պահեստազորային համակարգի բարեփոխումները,
- զինված ուժերում զինծառայողների փոխհարաբերությունների կարգավորումը և զինծառայողների իրավունքների պաշտպանության հուսալի երաշխիքների ստեղծումը և այլն:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովման շրջանակներում ընդունվեցին «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին», «Պաշտպանության մասին», «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» և այլ հիմնարար բնույթի օրենսդրական նոր ակտեր, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինապարտության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին», «Ռազմական ոստիկանության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և այլ բազմաթիվ գործող օրենքներում: Նախատեսվեց քաղաքացիական հատուկ

ծառայության ներդրումը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությանը վերապահվեցին որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասություններ, հստակեցվեցին պաշտպանության ոլորտի կառավարչական համակարգի իրավական վիճակի առանձնահատկությունները, ՀՀ նախագահի կողմից հաստատվեց ՀՀ զինված ուժերի կառուցվածքը, իսկ ՀՀ կառավարության կողմից պաշտպանական գերատեսչության և զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունների ու կառուցվածքների հետ միասին հաստատվեցին ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի կանոնադրությունն ու կառուցվածքը, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակը[10]:

Ամփոփելով հոդվածը՝ կարելի է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող պաշտպանական բարեփոխումների նպատակը քաղաքացիական վերահսկման և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի ստեղծումն է, որն ի զորու կլինի արդյունավետորեն ապահովելու Հայաստանի ռազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային անվտանգության հիմնարար արժեքները, օպերատիվ արձագանքելու բոլոր ճգնաժամային իրավիճակներին և երաշխավորելու պետության միջազգային պարտավորությունների կատարումը:

[1] Տե՛ս «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք // *Քոթանջյան Հ.Ս.*, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում- Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս- Աֆղանստան, Երևան, 2009, էջ 86:

[2] Տե՛ս, օրինակ, *Քոթանջյան Հ.Ս.*, Հայաստանի ռազմական շինարարության ու զինված ուժերի ստեղծման որոշ ուղղություններ // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 533-543:

[3] Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ զինված ուժերի զորահանդեսի ժամանակ, 21.09.2011թ. // www.president.am

[4] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012թ. // www.mil.am

[5] Տե՛ս *Քոչարյան Տ.Տ.*, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 212-213:

[6] ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007

[7] ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007

[8] Տե՛ս *Ավետիսյան Ա.*, Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008, էջ 80-83:

[9] Լրացուցիչ տե՛ս ՀՀ ՊՆ պաշտպանության ռազմավարական վերանայում // ՀՀ ՊՆ պաշտոնական կայք ՝ www.mil.am

[10] Լրացուցիչ տե՛ս *Քոչարյան Տ.Տ.*, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 199-204:

Арен Саргсян
Соискатель факультета международных отношений ЕГУ,
старший офицер-юрист военного комиссариата РА, майор

РЕЗЮМЕ

Основная цель и этапы реформ оборонной сферы Республики Армения

Приоритетом оборонных реформ Республики Армения является обеспечение превосходства боеспособностью вооруженных сил РА над вооруженными силами противника, создание и внедрение в вооруженных силах таких критерий, которые полноценно соответствуют особенностям национальной безопасности Армении, полностью решая задачи военной безопасности. В результате реформ одновременно будут обеспечены также нужные возможности взаимодействия республики для принятия своей роли гарантирования международной безопасности, для повышения имиджа и престижа Армении.

Ключевые слова *– вооруженные силы, оборонная реформа, безопасность, защита страны, военная угроза, стратегия, военная доктрина, система управления, законодательство, гражданский контроль.*

Aren Sargsyan
The PhD student of the faculty of international relations YSU,
senior officer-lawyer of the Commissariat of RA, major

SUMMARY

The main aim and stages of defence improvements of the Republic of Armenia

The top priority of defence reform of of the Republic of Armenia is the ensuring excellence combat readiness of armed forces RA with the enemy's armed forces, to have development and implementation of standards in armed forces fully comply with Armenia's national security features, completely solve the problems of military security. As a result of reforms simultaneously will be provided the opportunities with the necessary interoperability enhancing the professional image and international rating, for taking its role of guaranteeing international security.

Keywords *: armed forces, defence improvements, security, country defence, military threat, strategy, military doctrine, management system, legislation, civilian control:*